# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 մարտի 2025 թվականի № 86-Ա**

## ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի № 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ, 9-րդ և 22-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2025 թվականի մարտի 5-ի № 42/47.29/7202-2025 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ***Լևոն Պետրոսյանին*** 2025 թվականի մարտի 14-ին և 15-ին, երկու օրով գործուղել քաղաք Ծաղկաձոր՝ «Մարիոտ» հյուրանոց՝ «Հանրային կառավարման բարեփոխումների և Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների համատեքստում հանրային ծառայության որոշ հիմնախնդիրների քննարկում» խորագրով համաժողովին մասնակցելու համար:

2. ***Լևոն Պետրոսյանի*** գործուղման վայր փոխադրումը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում գտնվող ***«TOYOTA LAND CRUISER PRADO 2.7 l»*** մակնիշի ***827 CZ 61*** ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման ժամանակահատվածում ընդգրկված հանգստյան օրվա համար վարձատրել Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ***Լևոն Պետրոսյանին*** գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

**2025 թվականի մարտի 12**
**ք. Հրազդան**